

մուրջ, որով անցանէին բուլք ի բուլաց եւ հա-
 զարք հազարաց: Ասաց երկուհարիւր թօր
 տանել թունայու վերելով. եւ ամենայն քա-
 55 ղաքաց եւս առնուլ զթօրս եւ տանել: Եւ դտաւ
 անթիւ եւ անհամար թիւ հեծելոց, որպիսիք
 ոչ են երբեք եղեալ, ոչ ի հինն եւ ոչ ի նորս,
 ոչ յաւուրս մեծին Դարեհի, Արտաշէսի եւ ոչ
 կայսերաց Հռոմայեցոց եւ ոչ Արշակայ մեծի
 60 Հայոց արքային եւ ոչ այլոց:

Եւ ասին ոմանք ի դրանէ Օսմանին, թէ
 եօթն անգամ հարիւր հազար հոգի է եւ էձձի.
 զատ եւ որիչ ըզտապան, ջորէպան, ձիապան,
 սէյիս չուրա, հովիւք. թող զայլ խառնիճա-
 65 ղանճ ամբոխն. ԲՆՈՒՂԱՄ ԺԻԱՅՆ ԲԵՈՒՄԲ ԵՆ-
 ցանէր. թօրերն գոմէջնօք եւ եզամբք. ունէր
 ընդ իւր եւ Փիւլք. եւ ազգ եւ ազգ զէնք:

Եւ շարժեալ Ատրանու՝ գրեաց նամակ
 Լէհու արքային, որ ունէր օրինակ զայս.
 70 «Սուլթան Օսման հզօր եւ մեծ, յաղթող ամե-
 նայնի եւ ոչ ումեքէ յաղթահարեալ. արքայից
 արքայէ եւ ամենից իշխօղ խօնդքարէս. զոր
 ունիմ զչորս կողմ աշխարհիս ընդ իշխանու-
 թեամբս իմով, հարկատու արարեալ զամե-
 75 նայն ազգս եւ զազինս. այլ եւ ընդ ձեռամբ
 արարեալ զժՆ թագաւորութիւնս՝ տիրեմ ի
 ծովէ մինչեւ ի ծով. այլ եւ բոլոր տիեզերաց,
 սկսեալ ի Մաքայու կանաչ ծառէ, անդրանիկ
 որդի գոլով Մահմէտայ եւ համանման գոլով
 80 նմա. ունիմ զծառն կանաչ յուժ, օգնիչ ինճ եւ